ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «10» 11 2014թ. № 1028-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նշանակել որպես փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին արտադրանքի այն տեսակների համար, որոնց նկատմամբ կիրառվում են սույն հրամանի հավելվածում նշված տեխնիկական կանոնակարգերը:

2. Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների

կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը նշանակել 3 տարի ժամկետով, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-06(Հ-06)2014:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 801-Ա հրամանով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գրանցել համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թ.
_____ ____-ի N ____ -Ա հրամանի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Հայկական կոնյակների և հայկական կոնյակի սպիրտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 954-Ն որոշում

2. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1560-Ն որոշում

3. ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 22-Ն որոշում

4. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացնող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշում

5. ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1602-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 744-Ն որոշում

6. ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշում

7. ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 491-Ն որոշում

8. ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1913-Ն որոշում: